

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**

<b>Միջոցառումների իրականացման արդյունքների վերաբերյալ</b>		
<b>Ծրագրի կետը</b>	<b>Միջոցառումների անվանումները</b>	<b>Միջոցառումների կատարման արդյունքները</b>
2	3	4
5	Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում օրենսգրքի նախագծի մշակում	<p>Մշակվել է հարկային օրենսգրքի նախագիծը և ՀՀ վարչապետի 2015 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 02/23.12/16236-15 հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով նախագիծը ս.թ. հոկտեմբերի 7-ին սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ և այն քննարկելու նպատակով ընդգրվել է ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ին կայացած նիստի օրակարգի հարցերում:</p> <p>Հարկային խորհրդում ակտիվորեն ընթանում են հարկային օրենսգրքի նախագծի քննարկումները, որոնց ներգրավված են ոլորտի մասնագիտական-հասարակական կազմակերպությունների ու գործարար միջավայրի ներկայացուցիչները: Նախատեսվում է 2016 թվականի մարտ ամսին նախագծի վերջնական տարբերակը ներկայացնել ՀՀ ազգային ժողովի քննարկմանը:</p>
<b>Գերակա խնդիրների իրականացման արդյունքների վերաբերյալ</b>		
<b>Ծրագրի կետը</b>	<b>Գերակա խնդիրը</b>	<b>Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը</b>
2	3	4
5	Հարկային հսկողության մեխանիզմների կատարելագործում	<p>- Հարկային հսկողության բոլոր ձևերի իրականացման նպատակով <i>նիսկերի կառավարման համակարգի ներդրում</i></p> <p>Մասնակի ստուգումների (ուսումնասիրությունների) կազմակերպման և անցկացման հետ կապված գործընթացները կանոնակարգելու նպատակով 2015 թվականի մարտի</p>

19-ին ՀՀ ֆինանսների նախարարի կողմից հաստատվել է «Մասնակի ստուգումների ուսումնասիրությունների կազմակերպման և անցկացման հետ կապված գործընթացների կանոնակարգման մասին» թիվ 141-Ա հրամանը, որով կանոնակարգվել և առավել հստակեցվել է հարկային (տարածքային) տեսչությունների կողմից ընթացիկ ամսում իրականացման ենթակա մասնակի ստուգումների (ուսումնասիրությունների) քանակների նախատեսման գործընթացը: Հրամանի հաստատմամբ հսկողություն է սահմանվել նախատեսվող ստուգումների (ուսումնասիրությունների) նկատմամբ, որով հնարավորություն է ընձեռվել պարբերաբար իրականացնել տեսչությունների կողմից իրականացվող հսկողական գործառույթների վերլուծություն և մշտադիտարկում:

Հարկային (տարածքային) տեսչություններում ներդրվել է.

- Հսկիչ գնումների իրականացման համար անհրաժեշտ հիմնավորումների ձևերը: Ձևերի ներդրմամբ հսկողություն է սահմանվել նախատեսվող հսկիչ գնման ուսումնասիրությունների նկատմամբ, որով հնարավորություն է ընձեռվել պարբերաբար իրականացնել տեսչությունների կողմից իրականացվող տվյալ հսկողական գործառույթների վերլուծություն և մշտադիտարկում, ինչի հետևանքով բարձրացել է հսկիչ գնումների իրականացման արդյունավետությունը, նպատակայնությունը, ինչպես նաև հստակեցվել են կոնկրետ թիրախները:

- Հարկային հսկողության մեխանիզմների կատարելագործման նպատակով պետական գնումների համար տեղեկատվության տրամադրման ընթացակարգ: 2015 թվականի ապրիլ ամսից սկսած մշակվում և հարկային տեսչություններին տրամադրվում են պետական գնումների շրջանակներում հարկ վճարողների հետ կնքված պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը: Տեղեկատվության տրամադրման արդյունքում ուժեղացվել է ընթացիկ հսկողությունը պետական գնումներով հարկ վճարողների հետ կնքված պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների և մատակարարված ապրանքների արժեքի համապատասխան հաշվարկներում ժամանակին և ճշգրիտ

արտացոլման նկատմամբ:

- ՀՀ ֆինանսների նախարարի կողմից 2015 թվականի հուլիսի 6-ին հաստատվել է «Շրջանառության հարկ վճարողների կողմից շրջանառությունների հայտարարագրման և փաստաթղթավորման գործընթացում ռիսկերի կառավարմանն ուղղված միջոցառումների մասին» թիվ 455-Ա հրամանը, որով սահմանվել են ռիսկային շրջանառության հարկ վճարողների վերհանման սխեմաները և վերջինիս արդյունքում իրականացման ենթակա հարկային հսկողության կառավարմանն ուղղված միջոցառումների ծրագիրը:

Արդյունքում առավել հստակեցվել է շրջանառության հարկ վճարողների գծով հարկային տեսչությունների կողմից իրականացվելիք վերլուծական գործողությունները և դրանց հիման վրա հարկային հսկողության թիրախների ընտրության գործընթացը:

- ՀՀ ֆինանսների նախարարի կողմից 2015 թվականի հուլիսի 17-ին հաստատվել է «Պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների չդրոշմավորված լինելու դեպքերի բացահայտման, ինչպես նաև դրոշմավորված ապրանքների գծով դրոշմավորման և վերադրոշմավորման կանոնների պահպանման նկատմամբ հսկողությունը ուժեղացնելու մասին» համապատասխան հանձնարարականը, որով սահմանվել են այն հարկային հսկողության սխեմաները և մեթոդները, որոնք պետք է իրականացվեն հարկային տեսչությունների կողմից՝ ռիսկային հարկ վճարողների վերհանման և հարկային հսկողության կազմակերպման համար:

Արդյունքում առավել հստակեցվել է պարտադիր դրոշմավորման ենթակա արտադրող, ներմուծող և իրացնող հարկ վճարողների նկատմամբ հարկային տեսչությունների կողմից իրականացվող հարկային վարչարարության ուղղությունները:

Հարկային հսկողության մեխանիզմների արդյունավետությունը բարձրացնելու և ռիսկերի կառավարման համակարգը առավել արդյունավետ դարձնելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարի կողմից 2015 թվականի հոկտեմբերի 30-ին հաստատվել է «Ստուգման ենթակա ռիսկային հարկ վճարողների ընտրողականության համակարգը վերանայելու համար աշխատանքային խումբ ստեղծելու մասին» թիվ 739-Ա հրամանը,

որի համաձայն ստեղծված աշխատանքային խմբի նպատակն է կատարելագործել ստուգման ենթակա ռիսկային հարկ վճարողների ընտրողականության համակարգը:

Բացի այդ՝ հարկային հսկողության իրականացման մեխանիզմներում կարևորելով էլեկտրոնային կառավարման համակարգերի դերը, դրանց զարգացման և կատարելագործման համար ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 912-Ա հրամանով հաստատվել են նաև թվով 15 աշխատանքային խմբեր, որոնք զբաղվելու են գործող էլեկտրոնային կառավարման համակարգերի զարգացմամբ, ինչպես նաև նոր համակարգերի ներդրման աշխատանքներով: Վերը նշված աշխատանքային խմբերի կողմից կատարված աշխատանքների արդյունքում կկատարելագործվեն հարկային հսկողության մեխանիզմները, հարկային մարմնի վերլուծական հնարավորությունները և դրանց հիման վրա հարկային հսկողության թիրախների ընտրության գործընթացները:

ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 888-Ա հրամանով հաստատվել է «Հարկային (տարածքային) տեսչությունների աշխատանքների տարեկան արդյունքների գնահատման կարգը», որով սահմանվել են նոր ցուցանիշներ և գնահատման նոր մեթոդներ, ինչը հնարավորություն է տալիս գնահատել հարկային տեսչությունների հարկային հսկողությանն ուղղված միջոցառումների արդյունքները, վերլուծել վերջիններիս թույլ և ուժեղ կողմերը, և դրանց հիման վրա համապատասխան գործողություններ իրականացնել թույլ կողմերի վերացման ուղղությամբ:

*- կամերալ (գրասենյակային) ուսումնասիրությունների արդիականացված համակարգի ներդրում*

ՀՀ ֆինանսների նախարարի 2014թ. դեկտեմբերի 2-ի «ՀՀ ՖՆ Հարկային (տարածքային) տեսչություններում կամերալ (գրասենյակային) ուսումնասիրությունների անցկացման կարգը հաստատելու և կիրարկելու, ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2006 թվականի հուլիսի 4-ի № 1-06/378-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 856-Ա հրամանով հաստատված

կամերալ ուսումնասիրությունների իրականացման կարգին համապատասխան հարկային մարմնում 2015թ. երեք եռամսյակներում անցկացված թվով 6662 կամերալ ուսումնասիրությունների արձանագրությունների հիման վրա ճշտված հաշվարկներով լրացուցիչ 2657.0 մլն. դրամի հարկային պարտավորություններ են հայտարարագրվել, 1137.7 մլն դրամի հարկային վնաս է կրճատվել:

ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 28-ի «Հարկային (տարածքային) տեսչությունների հսկողական գործառույթ իրականացնող բաժինների և վերլուծական խմբերի աշխատանքները կանոնակարգելու մասին» № 642-Ա հրամանի համաձայն մշակվել և քննարկումների արդյունքում ներդրվել է հարկային (տարածքային հարկային) տեսչությունների վերլուծական խմբերի կողմից պարտադիր իրականացման ենթակա վերլուծական աշխատանքների նվազագույն գործիքակազմը:

Հարկային (տարածքային) տեսչություններում կամերալ ուսումնասիրությունների իրականացման մշակույթի ձևավորման, առանձին վերլուծությունների իրականացման միասնական մոտեցումների ձևավորման, ռիսկային տնտեսվարող սուբյեկտների բացահայտման, հաշվետվություններում անհամապատասխանությունների բացահայտման ուղղությամբ կամերալ ուսումնասիրությունների անցկացման թեմաներով վերապատրաստման դասընթացներին արդեն մասնակցել են թվով 454 հարկային ծառայողներ և նշված գործընթացը շարունակական է: